ռուս լեզուաւ, ի ձեռն հոգաբարձուի եկեղեցւոյս Հ. Աթանաս քահանայի Խոտիկեան մինչև ի 1830. աստի մինչ ի 1832՝ եկեղեցւոյն և ժողովրդեան հոգևոր խնամքն և առաջնորդութիւն կը վարէր քիչ մը յառաջ յիշուած Եւպատորիոյ և Սիմֆէրոպոլի ժողովրդապետ Յովնանեան քահանայն. իսկ 1832 էն կը սկսին դարձեալ արձանագրութիւնքն ի հայ լեզու Երեմեան տէր Յովհաննէս քահանային ձեռքով։ Մինչև ի 1840 ուրիշ քանի մի եկեղեցականք վարած են առժամանակեայ կերպով զայդ պաշտօն, և վերջապէս նոյն տարւոյն՝ Տաւրիոյ առաջնորդ Բժշկեան Հ. Մինաս վարդապետի առաջարկութեամբ վիճակաւոր եպիսկոպոսէն ժողովրդապետ դրուած է Հ. Յովսէփ Գարամուրգա վարդապետ։ Ամբողջ երեսուն տարուան միջոց՝ մինչ ի մահն (1840–70), եռանդուն բարեպաշտութեամբ և ամենուն հաճութեամբն և արժանաւոր մեծարանօք վարեց զայդ պաշտօն՝ բազմավաստակ և բազմահմուտ վարդապետս, որ մայրենի հայ լեզուին հաւասար յաջողութեամբ կը խօսէր նաև իտալական, գաղղիական, ռուս, լեհ և թուրք լեզուները. և Թէոդոսիոյ եկեղեցւոյս և ժողովրդեան բարոյական զարգացմանէն նպաստաւոր երեւցած նաև նիւթական բարւոքման։

1887 տարւոյն օգոստոսի 15ին մեծաշուք հանդիսութեամբ կատարուեցաւ եկեղեցւոյս հարիւրամեակը՝ իր առաջին վիճակն փոխելէն ու կրկին քրիստոնէական սուրբ կրօնի պաշտամանց նուիրուելէն ետքը։

Յետ առաւօտեան ժամերգութեանց՝ յառաջ քան զմիջօրէ ժամը տասնին, եկեղեցւոյն երեք զանգակներն իրենց քաղցրանուագ հնչմամբ շէն շէն կը